Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
մարտի 1-ի N 285 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏՈՒՄ ՔԵՏԵՂՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԻՑ ԲԱՑԻ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՐԻՉՆԵՐՈՒՄ ՔԵՏԵՂՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, փախստականի կարգավիճակ ունեցողների, քաղաքացիություն չունեցող անձանց և օտարերկրյա ֆիզիկական անձանց տրամադրվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի թողարկման և տրամադրման հետ կապված հարաբերությունները

2. Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր ձեռք բերելու համար հայտատուն դիմում է Հայաստանի Հանրապետության հավաստագրման կենտրոն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ հավաստագրման կենտրոն), որն իր կողմից հայտատուին ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, հավաստագրի տրամադրման նախապայմանները, ձևը, ժամկետները և վայրը:

3. Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի տրամադրման նախապայման է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կացության քարտի, Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրված նույնականացման քարտի, հանրային ծառայության համարանիշի կամ վերջինս չստանալու վերաբերյալ տեղեկանքի, ինչպես նաև թվային ստորագրության տարեկան սպասարկման վճարի կատարման մասին անդորագրի ներկայացումը:

4. Անձը հաստատող փաստաթղթերը և սպասարկման վճարի կատարման մասին անդորրագիրը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հավաստագրման կենտրոնը տվյալ հայտատուին հեռախոսային կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացնում է հավաստագրման կենտրոն ներկայանալու անհրաժեշտության մասին: Հավաստագրման կենտրոնը նաև տեղեկացնում է հայտատուի կողմից անձամբ ներկայանալու օրվա, ժամի և վայրի, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակների ներկայացման մասին:

5. «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի հիման վրա հայտատուն՝ անձը հաստատող բնօրինակ փաստաթղթերի հետ նույնականացվելուց հետո, հավաստագրման կենտրոնի հետ ստորագրում է համապատասխան էլեկտրոնային կրիչով հայտատուին հանձնված թվային ստորագրության կլիենտային ծրագրի տարբերակի, օգտվողի ձեռնարկի և կրիչում զետեղված էլեկտրոնային թվային հավաստագրի ընդունման-հանձնման ակտ: Հայտատուին տրամադրվում է նաև օգտվողի անունը (գաղտնաբառը) և կիրառման վերաբերյալ տեղեկատվական ձևը (թերթիկը):

6. Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը տրամադրելիս և դրանից հետո հավաստագրման կենտրոնը գործում է իր լիազորությունների շրջանակում՝ պահպանելով «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները:

7. Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը թողարկվում է 3 տարի ժամկետով: Հավաստագրի վերաթողարկումը կատարվում է ըստ հայտատուի դիմում-հայտի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ